

կե զատ՝ խիստ շուտ կընտանենայ ու կըհնազանդի ոչ միայն իրեն կերակուր տուողին, հապա նաև ո՞ր և իցէ անծանօթ մարդու որ հետը խօսի : Այթուունս պահել ուղղը աղէկ պէտք է նայի որ տանը մէջ կամ անոր կեցած սենեակը կահ կարասիք չգըտնուի . վասն զի մէկ զարմանալի ու վնասակար սովորութիւն մը ունի ասթուունս որ կարծր ու սուր կտուցովը ինչ բան որ գտննէ՝ իբր թէ անով խաղալու պէս կըկըտցէ, կըկրծէ, կապականէ, թէ լաթեղէն ըլլայ և թէ փայտեղէն : Ինոր համար, որպէս զի աս վնասները ըլլան, պէտք է ծառի մը ձիւղ կամ կոճ դնել առջել, որ ինչ վնաս որ կուզէ ընել՝ անոր վրայ ընէ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Խրբոր դղայ ճը լեզու իւլէ, ի՞նչ ինառն ընելու է վրան :

Տասօ մը լեզու ելլելու ատեն՝ որովհետեւ խելքն ալ աւելի բացուած կըլլայ, ծնողքը առջի ըսած կանոննիս պահելէն զատ՝ շատ զգուշաւոր պիտի ըլլան իրենց խօսակցութեան ու գործողութեանը մէջ, և ամենեին պիտի չխօսին ու չընեն այնպիսի բաներ որ տղոց սիրտը կարենան աւրելու չարացընել : Խօսակցութեան կողմանէ իրենց ընելու զգուշութիւնները ասոնք պիտի ըլլան .

Ամէն բանէ առաջ պիտի նային ծնողքն որ տղոց առջեւ յիշոցք՝ չընեն, և ոչ անպարկեշտ ու անհամեստ խօսքեր բանեցընեն, ոչ բարկութեամբ և ոչ կատակով . պիտի գիտնան որ յիշոցքը սատանայական խօսակցութիւնն է որ սովորաբար կիրքով գործա-

ծուելուն համար՝ տղոց միտքը խիստ շուտ կըմնայ, և ինչուան որ ծերանան՝ չեն մոռնար . բերնով ալ չբանեցընեն նէ՝ իմաստը մտքերնին կապականէ : Այնպէս պիտի զգուշանան անէծք ընելու չար սովորութենէն, որ սուրբ գրքին ըսածին նայելով շատ անգամ ալ կըկատարուի ի պատիժ ծնողաց անկարգութեանը : Ծղուն առջեւ ուրիշի վրայ պէտք չէ գէշ խօսիլու բամբասանք ընել: Ծղան յանդիմանելու ատեն պէտք չէ նախատական խօսքեր գործածել . զոր օրինակ ամենեին պէտք չէ ըսել, անզգան, անօրէն, չի, չըլլալու, շանլակոր, եւ, իսկ, ինեւն, և ասոնց նման անշնորհք և. անբանական բառեր . վասն զի տրղան այսպիսի կոպիտ խօսակցութիւններէն միայն աս խելքը կըսորվի որ երբոր մեծնայ՝ նոյն բառերը ինքն ալ ուրիշի կըգործածէ : Վաստիկ պէտք է զգուշանան նաև սուտ զուրցելէն, ուրիշի չարիք ուզելէն, ու վկէժինդրութեան խօսքերէն : Եւ աս բաներէս ոչ միայն ծնողք պիտի զգուշանան, հապա նաև տան մէջ եղողներն ալ պիտի զգուշացընեն . և թէ որ մէկը յանկարծ սխալի՝ պէտք է յանդիմանեն, տղուն ալ ապսարեն որ ինքը ամենեին այնպիսի բաներ չխօսի :

Երկրորդ, մեծ զգուշութիւն պիտի ընեն ծնողք որ տղոց առջեւ վնասակար ու գէշ պատմութիւններ ըլլապատմեն . պատմելու ալ ըլլան նէ՝ մէջի պակասութիւնները իմացընեն կամ վար զարնեն : Ի՞ն պատմութիւններէն ալ զգուշանալու է որ չարութիւնը վարպետութեամբ մը եղած կերեւնայ մէջերնին, ինչպէս են վարպետութեամբ եղած գողութիւն, ուրիշը խաբել, և այն : Ա ասն զի տրղան ասանկ բաներ լսելով՝ ինքն ալ կըվառուի ընելու . մանաւանդ երբոր տեսնէ թէ ուրիշները կըխնտան, ու ինչ աղէկ վարպետութիւն է, ըսելով կըզարմանան : Խիստ պիտի զգուշանան տղոց առջեւ անհամեստ պատմու-

թիւններ պատմելէն . ինչուան սրբոց վարուցը մէջ ալ թէ որ անհամեստ գիտուած մը հանդիպի՝ տղոց առջե պէտք չէ բացատրել , հապա գոց կերպով մը անցնիլ : Ի՞սոնցմէ զատ պիտի զգուշանան ծնողք անգիտութե պատմութիւններ պատմելէն , որպէս զի տղաքն ալ անգութ ըըլան : Պիտի նային որ առասպել պատմութիւններ՝ ալ ըպատմեն . վասն զի ասոնցմով դատողութիւննին կաւրուի , ու երբոր մեծնան՝ անհաւատալի պատմութիւն մը լսենուն պէս կըհաւտան , և թէ որ մէկը սուտ է ըսելու ըլլայ՝ իրենք կըպնդեն թէ կըրնայ ըլլալ , վասն զի ես իմ պզտիկութես ատեն ասանկ պատմութիւն մը լսեր եմ կըսեն . ասով կըլլան աւելորդապաշտ , դիւրահաւան , ու ամէն բանի կընայ ըլլալ ըսող մարդիկ : Երբեմն ալ մէկալդին անցնելով , այս պիսի նախապաշարմունքներով մեծնալէն ետքը՝ երբոր կիմանան թէ պզտիկուց ինչ սուտումուտ պատմութիւններով խաբուեր են , կըսկսին նաեւ ճշմարիտ պատմութիւնները և ինչուան սուրբք գրոց պատմածները արհամարհել , չհաւտալ , և այն . որով միամիտ ու դիւրահաւան չերենալու համար՝ իմաստակ ու չնչահաւատ կըլլան , որ առջինէն ալ գէշ ու վնասակար է :

Որպէս զի տղան վախկոտ ըլլայ՝ պէտք չէ իրեն առջե վախնալու պատմութիւններ պատմել . և թէ որ կարդալ գիտէ՝ պէտք է նայիլ որ ան տեսակ պատմութիւններ չկարդայ . և աս զգուշութիւնս ընելու է ինչուան տասնըվեցերորդ տարին . վասն զի թէ որ մէյմը տաքնայ երեակայութիւնը այսպիսի պատմութիւններով , ալ անկէ վերջը գիշեր ատեն առանձին տեղմը չկընար կենալ , և սզտի ձայն մըն ալ լսելու ըլլայ՝ կըսկսի պուալ կանչել ու փախչիլ . որով կըլլայ վախկոտ ողորմելի մարդ մը : Հոգւոյն ալ

մեծ վնաս կընէ աս վախկոտութիւնը . վասն զի թէ որ պզտի վախնալու գիտուած մը հանդիպի , մէկէն կըշփոթի , կըշուարի , ընելիքը չգիտնար , ամէն բանի մէջ կըտարակուսի՝ ընէ թէ ընէ , և բան մը չկընար որոշել . խղճմտանքի նիւթերու մէջ ոչինչ ու անմեղ բաները մեծ մեղքերու տեղ կըդնէ , և կըլլայ կասկածոտու խղճա . հար : Ի՞սանկ մարդը թէ որ բարիք ու աղէկութիւն մը ընելու ըլլայ , աւելի վախէն կընէ քան թէ բարեպաշտական սկզբունքով . որով Ի՞ստուծոյ առջեն ալ վարձք չունենար :

Ոյէ որ ծնողք տեսնեն որ իրենց զաւակը վախկոտ է , պէտք է շուտով գէմը առնեն . նախ հասկըցընեն իրեն թէ ան տեսակ պատմութիւններուն պէտք չէ հաւտալ՝ որոնց մէջ սատանայական , կախարդական և ասոնց պէս վախնալու դիպուածներ կան . ըսել իրեն թէ սատանան հասարակ մարդու չերենար , իսկ քրիստոնէին ամենենին չկընար մօտենալ՝ մանաւանդ երբոր անիկայ իրեն պարտքերը կընէ . և թէ որ տղան ըսելու ըլլայ թէ հապա ինչպէս աս կամ ան սուրբին սատանայ երեցեր է , կամ թէ աս ան անպիտան չարագործին , ըսելու է իրեն թէ դուն ոչ անանկ սուրբ և ոչ անանկ մեղաւոր ես , ուստի քեզի սատանայ չերենար :

Ի՞ս բարեպաշտական ու քրիստոնէական սկզբունքն ալ սորվեցընելու է տղուն՝ թէ երբոր մինակ ու վախնալու տեղմը գտնուիս՝ ինքզինքդ Լ. Յ. լ. ճածնայ , կամ պահապան հրեշտակիդ յանձնէ , և կամ երեսդ խաչակնքէ . և որպէս զի աս խրատս աւելի օգտակար ըլլայ՝ աղէկ կընեն ծնողք որ տղուն առջե շատ անգամ իրենք օրինակը տան : Ոյէ որ տղայ մը վախնայ գիշեր ատեն առանձին պառկելու , պէտք է որ հայրը կամ մայրը գիշերով կամացուկ մը քովէն չեռանայ , անանկ որ ինքը չիմանայ . ասանկ մէկ քանի օր ընելէն ետքը տղուն իմացընելու է թէ ինքը երկու իրեք

գիշեր է որ մինակ կըպառկի . ասով վախը կանցնի :

Ի՞այց աս զգուշութիւնները անօգուտ կըլանթէ որ տղան տեսնէ թէ տան մէջ ուրիշը աս տեսակ բաներէն կըվախնայ , ու աս տեսակ բաներու վրայ կըխօսի : Ի՞նոր համար ծնողք զամէնքն ալ պիտի զգուշացընեն որ այսպիսի նիւթերու վրայ չխօսին : Այսով ինքիրմէ կիմացուի թէ որչափ անխելքութիւն է ոմանց , և մանաւանդ տղաքը նայող աղախիններուն ու ծառաներուն ըրածը , որ տղուն լացը կտրելու համար կամ ան է որ այլանդակ ձախով կըկանցվրուտենտը զուն գլխուն վերևը , կամ ան է որ տրաղը եկաւ , խոլըէ եկաւ , գայլը եկաւ , արջը եկաւ ըսելով կըվախցընեն . ասոնք իրը թէ տղուն լացը կտրելով բարիք մը կընեն . չեն գիտեր որ անոր տեղը տասը չարիք կըսորվեցընեն անմեղ տպուն , որոնց գլխաւորներն են վախկոտութիւն և աւելորդապաշտութիւն :

Ի՞այելու է որ տղոց առջև աշխարհքիս ունային բաներուն վրայ ալ զգովասանքներով՝ զարմանքներով չխօսուի . ոչ ստըկի , ոչ հարստութեան , և ոչ աշխարհային բաներուն սէր ցուցուի , որպէս զի տղուն աչքը բացուելուն պէս՝ ունայինութեանց ետեւէ ըլլայ . հապալնդ հակառակն պիտի ջանան ծնողք որ ջմարիտ և յաւիտենական բարիքներու վրայ խօսին , որ Այսուած մեզի պատրաստեր է , և տղուն իմացընեն թէ ինքն ալ իրեն պարտքերը ընէ , ու աս աշխարհքիս ունայինութեանց ետեւէ ըլլայնէ՝ հոն պիտի երթայ ու անոնք վայելէ : Տղոց առջև պիտի նային ծնողք որ ափեղցըփեղ կատակներ , փուժ խօսակցութիւններ ընեն . հապա ուրիշներուն հետ խօսելու ատեն ամենուն իրենց արժանաւոր պատիւը տան , որպէս զի տղան ալ մեծնայ նէ՝ ուրիշներուն հետ այնպէս խօսի , ու

ըով ուրիշներուն սիրելի , ու իրեն ընկերութիւնը ամէնուն հաճելի կըլայ :

ԵՐԿՐԱԴՈՒԹՈՒԹԻՒՆ

Ա արուշանի կարգ :

ԵՐԿՐԱԴ հերկելէն ու պատրաստելէն ետքը երկրագործը ուզած բանը կրնայ մէջը ցանել ու տնկել . բայց հարկաւ աս բանիս մէջ կարգ մը պիտի ըլլայ որ աշխատանքին համեմատ պտուղ ալ քաղէ : Ուէ որ ամէն տարի նոյն արտին մէջ նոյն բոյսը ցանես կամ տնկես , այնչափ շահաւոր ըլլար՝ որչափ թէ որ ամէն տարի այլքայլ տեսակ բոյսեր տնկելու ըլլաս . վասն զի բոյս կայ որ իր բոլոր սնունդը գետնէն կառնէ , անով հողին պարարտութիւնը երթալով կըպակսի . բայս ալ կայ որ գետնէն խիստ քիչ հիւթ կըծըծէ , ու աւելի տերեւներովը օդէն հիւթ ու թացութիւն կառնէ , անով կըսնանի . ուստի երկրագործին կիյնայ անանկ կարգ մը բռնել որ ամէն տարի որ և իցէ տեսակ բոյսերը այլ և այլ արտերու մէջ տնկէ ու գետնին ուժն ու պարարտութիւն ալ միշտ հաւասար մնայ , և հարկ ըլլայ տարիներով երկիրը պարապ թողուլ՝ պարարտացընելու համար : Իրաւ է որ արևելքի երկիրները շատ տեղ պարապ ու անգործ ըլլալով , երկրագործները սովորաթար նոյն երկիրը ամէն տարի բանեցընելու կարօտ չեն սեպուիր , անոր համար աս տարի մըշակած արտը գալ տարի կըթողուն որ հանգչի , և իրենք ուրիշ արտ մը կըհերկեն : Ի՞այց քանի որ արևելքի երկրագործութիւնը ծաղկի , ինչպէս որ յօյս կայ՝ օսմաննեան տէրութեան նոր հաստատած երկրագործական ժողովքէն , հարկ պիտի ըլլայ գիտնալթէ նոյն երկրէն ամէն տարի բաւական բերք առնելու համար՝ վարուցանին մէջ ինչ կարգ բռնելու է :